

## Տ. ՎՐԹԱՆԵՍ ՔԱՀԱՆԱ ԲԱՂԱԼՅԱՆ
(ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1978 թ. մայիսի 7-ին Արմավիրի մարզի Պտղունք գյուղում:

1984-1994 թթ. սովորել է տեղի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-2001 թթ. ուսումնառությունը շարունակել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմա րանում:

2001 թ. հունիսին լուսարար է նշանակվել Ս. Էջմիածնի Մայր Տաճարում:

2001 թ. հունիսի 22-ին, ձեռամբ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի, ձեռնադրվել է սար կավագ:

2002 թ. հոկտեմբերի 31-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Պողոս Տարոնացու «Ընդդէ Թեոփիսպեայ» թղթի քրիստոսաբանական հիմնադրույթները» թեմայով:

2003 թ. փետրվարի 20-ից վերակացու է նշանակվել Սևանի Վազգենյան Հոգևոր Դպ րանոցում:

2003 թ. սեպտեմբերից ծառայում է ՀՀ Զինված Ուժերում որպես հոգևոր խորհրդատու:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Ար շակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի մեկ արու զավակ: